



**HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH**  
101 ASHMEAD ROAD, CHELTENHAM, PENNSYLVANIA 19012

Օգոստոս 27, 1967

Գերաշնորհ

Տ. Թորգոմ Եպս. Մանուկեան, Առաջնորդ  
Հիւս. Ամերիկայի Արեւելեան թեմին

Նիւ Եորք

Գերաշնորհ և Սիրելի Սրբազան,

Նկատելով որ համայնքիս տարեկան Ձեր այցելութիւնը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Նոյեմբերի 19ին, եկեղեցւոյս օծման առաջին տարեդարձին, յարմար կը նկատեմ մի քանի կարեւոր պարագաներ Ձեր ուշադրութեան յանձնել ու խնդրել Ձեզմէ որ յարմար դատելէ ետք ընթացք տաք անոնց:

1. Գնահատանք ծառայողներու

ա. Եկեղեցւոյս երկարամեայ սարկաւազ Մինաս Մալումեանի ծառայութեան 40ամեակն է այս տարի. ան 1927էն ի վեր եղած է, ինչպէս Դուք ալ կրնաք վկայել, համայնքիս ներքին կազմակերպիչներէն մին: Իմ յանձնարարութիւնս է որ Ձեր կողմէ օրհնութեան գիր մը և Առաջնորդ դարանի զարդակոճակ մը յանձնուի իրեն այդ օր Ձեր ձեռքով ի նշան գնահատութեան: Անշուշտ նոյն կարգի ուշադրութիւն մըն ալ տրուելու է Օրդ. Աղաւնի Բարունակեանի իր նոյնքան 40 տարի ծառայութեանը համար. սակայն այս մէկը կը թողուք Ձեր 1968ի այցելութեան:

բ. Սուրեն Բարեջանեան, որպէս Ատենապետ Շինութեան Յանձնախումբի արժանի է Ձեր գնահատանքին, որուն կարելի է Առաջնորդարանի զարդակոճակ մը տալ նոյն օրը:

գ. Սարգիս Մանուկեան, որպէս երկարամեայ Ատենապետ Եփական Խորհուրդի դարձեալ արժանի է Ձեր ուշադրութեան և գնահատանքին, որուն կարձեալ կարելի է զարդակոճակով մը պատուել:

2. Ուրարի տուչութիւն և Դպիրներու օրհնութիւն

Աւելի քան տարի մըն է Պոլսէն եկած երիտասարդ մը 45 ամեայ ամէն կիրակի անխակն իր բոլորանուէր ծառայութիւնը կը բերէ որպէս բուրվառակիր: Իր մասին հարցարան մը պատրաստած եմ և զրկած որպէս թեկնածու ուրար կըրելու: Ինչպէս կը յիշէք անցեալ Ձեր գալուն խօսքէն այս մասին: Խնդրեմ այս պարագան նկատի ունեցէք:

Կաւել դպիրներու համար, տղաք և աղջիկներ, թերեւս մէկ անգամէն ձեռնադրուելու են, և կամ գոնէ մի քանի այն տղաքը որոնք մոմակալի և բուրվառակիրի պաշտօն ալ կը վարեն: Այս մասին տակաւին կը խօսինք:

այս շաբթու երբ զերար տեսնենք լիեղեցականաց համագումարին:

Կանխայայտ շնորհակալութեամբ և սիրով եղբայրական  
Աղօթակից,

*Էջմիածնի Երանոս Գևորգյան*

Զաւէն Ժ. Վրդ. Արղումանեան, Հովիւ

Քի. 19163  
Օգոստոս 29, 1967

Հոգեշնորհ  
Ց. Ջալիլ Ս. Հրդ. Արզումանեան  
Հոգեւոր Հոգի. Ար. Սրբորգութիւն Եկեղեցւոյ  
Նորթ Տիւսնեյքա.

Սիրելի Հայր Ջալիլ.

Ասացած ենք 27 Օգոստոս 1967 թուակիր Ձեր նամակէն կը յուսանք որ այս շարաքովերէին երբ Հանգիպին Հոգեւորականաց Համադումարին ապիթով, աւելի մանրամասնութեամբ կը խօսին Եկեղեցւոյ մէջ ծառայողներուն գնահատութեան կերպի մասին:

Ուրախ աւելութեան համար թեկնածու երիտասարդին հանձնել թեյզընէ որ սորվի յարակօրէն կարգաւ սարկաւզի քարոզները եւ սաղմոսները որոնք կը զարմանուին մանրագութեանց ընթացքին, ըստ մանրագրքին Գալատիէի է նաեւ որ "Սարկաւզ" երգապատկին վրայէն սորվի "տարազի մէջ սարկաւզի բաժինները":

Սիրոյ սղջունիւ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Ներգալուած է  
Կարպետ Տիւնանի  
յանձնարարականը

Մարտ 81, 1967

Հոգ2.

Տ. Ջալէն Վրդ. Արգումանեան

Հոգեւոր Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ եւ

Նախագահ Երեւան Խորհուրդի

Ֆիլասելֆիա

Սիրելի Հարր Ջալէն,

Առաջնորդ Սրբազանը ձեր նամակը ստացած է ի մասին Մկրտութեան  
աւագանի օժման եւ ձեզ ծայրագնութեան աստիճանի առաջնութեան Ապրիլ 18ին:  
Ես ալ ձեր հրակերը ստացած եմ եւ Առաջնորդ սրբազանի կարգադրութեամբ  
իրեն պիտի ընկերանամ:

Հիմա ձեզ կը մնայ որոշել թէ ինչ կարգադրութիւն պիտի ընէք: Եթէ  
կը փափաքիք զալ եւ առաջնորդ Սրբազանը ինքնաշարժով տանիլ, լաւ. այ-  
լապէս մենք շոգեկառքով կրնանք զալ, միայն թէ մեզ ըսէք որ քանի՞ն  
պէտք է հոն ըլլանք: Եթէ անհրաժեշտ է կրնանք ժամը 6ին ալ ձեր քա-  
ղաքը ըլլալ: Գրեցէք մեզ ձեր կարգադրութեանց մասին:

Յաջողութիւն բոլորիդ:

Աղօթակից

Վազգէն Ե. Վրդ. Գրգորսւեան  
Առաջնորդի Փոխանորդ

Very Reverend  
Zaven Arzoumanian,  
Pastor

(Area Code 215)  
Church: ESsex 9-2515  
Residence: RAndolf 5-6999



**HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH**  
101 ASHMEAD ROAD, CHELTENHAM, PENNSYLVANIA 19012

Մարտ 28, 1967

Հոգեշնորհ  
Տ. Վազգէն Ծ. Վրդ. Գալստեան,  
Առաջնորդի Փոխանորդ Հիւս. Ամբրիկայի Թեմին,

Նիւ Եորք

Սերեւի Հայր Վազգէն,

Հոգաբարձութեանս երեկուան նիստին յայտնի եղաւ որ Առաջնորդ Սրբազանը համայնքս պիտի այցելէ Հինգշաբթի Ապրիլի 13ի երեկոյեան կատարելու համար նորակառոյց Մկրտութեան Աւազանի օծումն ու նաեւ եկեղեցւոյս Հովիւին Ծ. Վրդ. աստիճանի տուու չուրիւնը:

Մեր փափաքը պիտի ըլլայ որ դուք եւս մեր հետ ըլլաք նոյն օր, անշուշտ Առաջնորդ Սրբազանի հաւանութիւնը աքնելէ ետք, կատարելու համար խարտաւիւրակի պաշտօնը: Այս մասին գրած ենք Առաջնորդ Սրբազանին: Կը խնդրենք որ սոյն թուականը ապահովէք մեզի համար:

Իսկ ի պատասխան Ձեր նամակին կ'ուզեմ ըսել թէ կ'ընդունինք Առաջնորդ Սրբազանի կարգադրութիւնը տալու համար հոգեւոր ուղերձը թայիսին կայանալիք Պատգամաւորական Ժողովին:

Ապրիլ 13ի ճամբորդութեանց մանրամասնութիւնները երբ Լսենք ըստ այնմ կը շարժինք:

Սերոյ ողջունել  
Առօթակից,

Զաւէն Վրդ. Արզումանեան  
Հովիւ



**HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH**  
101 ASHMEAD ROAD, CHELTENHAM, PENNSYLVANIA 19012

Մարտ 28, 1967

Գերաշնորհ  
Տ․ Թորգոմ Եպիսկոպոս Մանուկեան,  
Առաջնորդ Հայո․ Եկեղեցւոյ Հիւս․ Ամերիկայի Թեմին,

Նիւ Եորք

Գերաշնորհ և Սերելի Սրբազան Հայր,

Շնորհակալութեամբ ստացած ենք Ձեր մարտ 17 թուակիր նամակը հաղորդելով թէ Ձեր Սրբազանութիւնը մեր պիտի կարողանայ ըլլալ թէ Հինգշաբթի Ապրիլի 13-ի երեկոյեան, և թէ Կիրակի Հոկտեմբեր 22ին, ինչպէս նաեւ նախորդող շաբաթավերջին, նորակառոյց եկեղեցւոյս օծման առաջին տարեդարձին առիթով:

Երեկուան մեր Հոգաբարձական նիստին աւելի մօտէն քննելով հարցերը եկանք հետեւեալ եզրակացութեան: Մկրտութեան աւագանի, կողմնակի խորաններու և իւղանկարներու օծումը, ինչպէս նաեւ եկեղեցւոյս Հովիւին Տ․ վրդ․ ութեան աստիճանի տուուչութիւնը կատարել նոյն օրը, Ապրիլի 13-ի երեկոյեան— Հինգշաբթի: Աւելի գործնական նկատուեցաւ այս ձեւը քան թէ յետաձգել մինչեւ Հոկտեմբերի Կիրակին, երբ արդէն արարողութիւնը երկար պիտի ըլլայ, ու աստիճանի տուուչութիւնը 45 վայրկեանով մը աւելի պիտի երկարեցնէ:

Հետեւաբար, կը խնդրենք Ձեր Սրբազանութենէն որ նկատի ունենաք Ապրիլի 13ի Ձեր որոշած թուականը զոյգ արարողութիւններու համար—Աւագանի Օծման և աստիճանի տուուչութեան: Այս առիւ պատեհ և գործնական պիտի ըլլայ ունենալ Ձեր հետ նաեւ Առաջնորդի Փխանորդ Հայր Սուրբը, որուն եւս հրակէր—նամակ մը դրկուած է․ անշուշտ Ձեզմէ կախում պիտի ունենայ իր կարենալ գալը: Յատուկ ծանուցադրեր այսօր իսկ պիտի պատրաստուին դրկուելու համար ժողովուրդին: Կը մնայ գիտնալ թէ Հինգշաբթի որ ժամուսն պիտի կարենաք գալ եւ ինչպէս: Հարց եղաւ ճշակերոյթ մը սարքելու մասին․ աւելի յարմար տեսանք ժողովուրդը հրակելու Ժամը 8ին և անի շապէս սկսիլ արարողութեանց, և քնկէ ետք սարքել թէյասեղան մը —այնպէս որ ճաշը անգործնական նկատուեցաւ: Ձեր դալու մանրամասնութեանց եթէ տեղեակ ըլլամ թերեւս որո՞չ կարգադրութիւններ կանխօրօք կը կատարուին:

Հաճեցէք ներքակ ստանալ 955․34 տու․ փոխգիր մը Առաջնորդարանի վերջին հաշուեցոյցին առ հաշիւ:

Մասնաւոր շնորհակալութիւններով կ'ակնկալենք Ձեր գալստեան,

Առօթակից,  
Զաւէն վրդ․ Արզումանեան, Հովիւ *(Յարութեան Գրք)*

Տունուար 23, 1967

Հոգեշնորհ  
Տ. Զալին վրդ. Արզումանյան  
Հոգեհար Հովիտ Ա. Արթուրյանի Եկեղեցույ  
Նորթ Ֆիլասելիքս.

Արթիկ Հայր Սուրբ.

Եստեղ ի վեր Ձեզի գրելու համայնին զրկուած եմ: Չեաց է ստել  
թէ անցնող Ծոցստուէն սկսեալ հարկազրուեցայ սովորականէն աւելի շատ  
գիւ ինքնիւ հոգեհար շարունակ իբր յաշորդեցին, եւ ես այս բանալու  
ժամանակ յունեցայ բնաւ Սրբու կողմէ, ձերան հարուստ ըսուածն ու  
հա անխոն անի է որ զինկա ազատ ի ձերս Արթիկ վր անպայման ե-  
կեց Սրբու Արթ. պայմանաւ որ իրիկուծ իջ իրանին բաժակ իջ գիւնի ա-  
նեց Ձեր համեստ յարկին առի:

Քիչ ասալ հեռանայնով խոսեցայ հոմիտաս Սրբաշինուցի նոր զեկա-  
վար Տոգթ. Արթիկ Սրբուանի հետ: Ան յաւ թէ առաջին անգամն է որ այդ  
անսակ գիւնուի կէ անդեկանայ: Ձեր առաջին նաժարին յուրցուածքին հա-  
մանայն, ես խնդրած էի շուրջակա հարգան Մանուկեանին որ հոմիտաս  
հետ հակադրուիման գալէ ետ Ձեզի անդեկացիք Ձեր իր եւ խուրճին  
ժամանակուիման կարելիութիւնք: Ես կը բարի որ ինչեւ հիմա պար-  
գիւն անգամ է ժամանակը, եւ զուր լեւ կըցած Առաջնորդարանի Ծանկակ  
Սրբութեան յայտադիրը կազմել յառաջիկայ Ապրիլ 16ի համար:

Տոգթ. Սրբուան այս շնորհաբեր, հոմիտասի փորձի պակուծ, անգամ-  
ներուծ պիտի խոսի Ձեր անեկանութեան ժամին: Քիչադրեց որ զուր գրե  
ուղղակի հոմիտաս Սրբաշինուցին՝ Առաջնորդարանի հասցեով, որպէս զի  
հարցը նկատի առնեն եւ պաշտօնապէս պատասխանեն:


Ձեր վերջին գրութիւնը պիտի երեւի "Հայաստանեայց Եկեղեցի"ի  
ժողովարանի համարին #12: Համարակազմութիւնը կ'ուսնեմ յնորձեւ որ  
Արթիկ թիւին համար ժամանակահատիկ կամ եկեղեցական նիւթ իջ նուիր-  
ուած գրութիւն իջ հանի հասցնել:

Արթիկ եւ յարգանք

Սուրբին Ամուսնեման

Very Reverend  
Zaven Arzoumanian,  
Pastor

(Area Code 215)  
Church: ESsex 9-2515  
Residence: RAndolf 5-6999



**HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH**  
101 ASHMEAD ROAD, CHELTENHAM, PENNSYLVANIA 19012

Յուշուկար 18, 1967

Յարգելի և  
Սիրելի Պրն. Սուրէժ Մանուէլեան,  
Դիւանապետ Հայոց Առաջնորդարանի

Կիւ Երրբ

Սիրելիք իմ,

Երկար ատեն է տեսնուած չունինք. նոյնիսկ համեղ  
նամակներդ ալ յամեցան: Բազմազբաղ ես. նոյնպէս մենք:  
Կը յուսամ տօնական արձակուրդներդ ազնիւ Տիկնոջ և զա-  
ւակներուդ հետ լաւ անցան և ուրախացաք: Պէտք է մէյ մը  
գամ ու տեսնեմ զՁեզ սիրով:

Խնդրիք մը ունիմ սիրելութենէդ: Բաւական ժամանակ  
առաջ կոմիտաս Երգչախումբի վարչութեան նամակ մը գրեր էի  
յայտնելով մեր Առաջն. Օժանդակ Միութեան խնդրանքը, որով  
կը փափաքին հրաւիրել Երգչախումբը Կիրակի օր մը ԸԼԼաԼու  
մեզ հետ, երգելու Ս. Պատարագին և ապա ճաշկերոյթէն վերջ  
ալ օրուան յայտագիրը վարելու: Գլխաւոր արուեստագէտը պիտի  
ԸԼԼայ Պրն. Վարդան Մանուէլեան, Զութակահար: Տակաւին որեւէ  
պատասխան չեմ ստացած:

Կը խնդրեմ դիմեցէք առ որ անկ է և յայտնեցէք նամակիս  
բովանդակութիւնը, նաեւ Պրն. Վարդան Մանուէլեանի անունը, որուն  
հետ կարգադրուած է և օրը նշանակուած Կիրակի ԱՊրիլ 16, 1967:  
Թող բարի ԸԼԼան մեզի գրաւոր կերպով յայտնելու իրենց համաձայ-  
նութիւնը:

Կանխայայտ շնորհակալութիւններով,  
և սիրով

Զաւեն Վրդ. Սրգումանեան, Հովիւ



ԹԻԼ 20847  
Մարտ 8, 1968

Հոգեհշտրհ  
Տ. Զաւէն Ս. Վրդ. Արզումանեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
եւ Կաթաղակ Միակտն Խորհուրդի  
Նորթ Յիւանեւիա.

Սիրելի Հայր Զաւէն,

Ստացած ենք 28 Փետրուար 1968 թուակիր Ձեր նամակը, Ամենայն  
Հայոց Հայրապետին Յիւանեւիա այցելութեան կապակցութեամբ:

Հերեւեալ կարեւոր կէտերը կը յանձնենք Ձեր ուշադրութեան.-

1. Վեհափառ Հայրապետը Մայիս 8, Զորեցչաբթի կէսօրէին ժամը  
մէկի շոգեկառքը պիտի կարողանայ առնել Նիւ Եորքէն:
2. Միայն մէկ տեղ Յանձնախումբը պէտք է որոշէ, ուր ժողո-  
վուրդը պէտք է հաւաքուի զիմաւորելու համար Վեհափառ  
Հայրապետը:
3. Այս համբորդութեան հանապարհանախի մասին տեղին չէ  
այժմէն մտահոգուիլ:
4. Երեկոյեան հաշկերոյթը վստահ ենք թէ հոգ պիտի տանիք որ  
ունենայ պատշաճ եւ ամփոփ յայտագիր մը:

Սիրոյ ոգշունիւ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ



**HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH**  
101 ASHMEAD ROAD, CHELTENHAM, PENNSYLVANIA 19012

Փետրուար 28, 1968

Գերաշնորհ

Տ. Թորգոմ Եպս. Մանուկեան, Առաջնորդ  
Հիւս. Մաթեռիկայի Հայց. Եկեղեցւոյ

Նիւ Եորք

Գերաշնորհ և Սիրելի Սրբազան,

Այսու կը փափաքիմ տեղեկացնել թէ երէկ գումարեցինք մեր երրորդ ժողովը Վեհափառ Հայրապետի Ֆիլատելֆիա այցելութեան կապակցութեամբ: Ուրախ եմ յայտնելու որ երկու եկեղեցիներու հոգաբարձական Լրիւ կիսովերն ու երեսփոխանները ամէն ջանք կընեն արժանավայել ընծայելու համար Նորին Սրբութեան շնորհաբեր այցելութիւնը:

Երէկ անհրաժեշտ նկատուեցաւ Ձեր Սրբազնութենէն խնդրել կարգ մը այլ մանրամասնութիւններ: Փոքրիկ յանձնարումը մը պիտի գայ Նիւ Եորք նախորդ դիշեր որպէսզի Վեհափառ Հայրապետի և շքախումբին ընկերանալով գան Ֆիլատելֆիա: Նկատելով որ ժամանակը Վեհի հոս գտնուելուն պիտի ըլլայ շատ կարճ հարկ տեսնուեցաւ, եթէ կարելի է, Նիւ Եորքէն ճամբայ ելլել առաւօտեան ժամը 10ին շոգեկառքով որպէսզի կէսօրին հոս հասնին ու պատրաստուած յայտագիրը կարելի ըլլայ գործադրել: Եթէ այս մասին Ձեր հաւանութիւնը տաք շատ շնորհակալ պիտի ըլլանք: Եթէ վստահ չեղանք թէ Վեհափառ Հայրապետին և շքախումբի անդամոց Ն. Ե. էն Ֆիլատելֆիա շոգեկառքի ճանապարհածախսը ով պիտի հոգայ. ընդհանուր կարծիքն այն էր թէ մեր պարտքն է այդ, և կը խորհիմ թէ շիտակ ձեւն ալ այդ է:

Երազրուած յայտագիրը կ'ընդգրկէ.—

- ա. Վեհին և շքախումբի պաշտօնական դիմաւորում 30րդ փողոցի կայարանը.
- բ. Վեհափառ Հայրապետի այցը Ն. Ֆիլ. Հայոց եկեղեցին ուր օտար եկեղեցականներ և ժողովուրդը պիտի դիմաւորեն ու թափօրով բարձրանան եկեղեցի կարճ արարողութեան համար:
- գ. Այց Ս. Սահակ Ս. Մեսրոպ եկեղեցի
- դ. Երեկոյեան հանդիսաւոր ճաշկերոյթ—ընդունելութիւն Պէլվիոլ-Սրբեմօլորտ պանդոկի սրահին մէջ:

Բնական է այս բոլորը որոշ ժամերով պէտք է դասաւորել. և եթէ իմանանք թէ կարելի է առաւօտեան ժամը 10ին ԴՇ Մայիսի 8ին ճամբայ ելլել Ն. Ե. էն, կարելի պիտի ըլլայ կը խորհիմ առանց անհանգստութիւն պատճառելու Վեհափառին ընթացք տալ յայտագրին: Սպասելով Ձեր թելադրութեանց

*Handwritten signature and text at the bottom of the page.*

Քիւ 20214  
Փետրուար 5, 1968

Հոգեշնորհ  
Տ. Զաւէն Մ. Վրդ. Արզումանեան  
Հազիւոր Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
եւ նախագահ Երական Խորհուրդի  
նորից Ֆիլատելիա.

Սիրելի Հայր Զաւէն,

Ատացած ենք Յունուար 15, 22 եւ 23 թուակիր Ձեր նամակները:  
Համաձայն Ձեր խնդրանքին, Սեպտեմբեր 29ի շարաթովերջը նշանակեցինք  
թուական համայնքիդ տրուելիք մեր այցելութեան:

Աայր ճանարին օծման կապակցութեամբ յայտարարութիւններ հետզհե-  
տէ պիտի հաղորդուին համայնքներուն:

Կը յուսանք որ համայնքիդ անդամները ցարդ ստացած կ'ըլլան Առաջ-  
նորդարանի նոր սարուան պատի օրացոյցները: Կը թելադրենք որ Ձեր աշ-  
խատանքը յատկացնէք յիշեցնելու համայնքիդ անդամներուն որ իրենց նը-  
ւերները անյապազ ուղարկեն:

Ուրախ եղանք իմանալով որ Ֆիլատելիոյ Թէմփըլ Համալսարանէն շքը-  
շանաւորութիւնով, Փետրուար Ցին կը ստանայ Մագիստրոս Արուեստից Տիտ-  
ղոսը: Այժմէն կը ~~հարգուի~~ Ձեզ եւ կը յուսանք որ Յունիսին շքը-  
նաւորութիւն արարողութիւնը երբ տեղի ունենայ, առիթ կ'ունենանք անձնապէս  
ներկայ ըլլալու:

Կը մաղթենք որ Աստուծոյ շնորհքը առատանայ Ձեր անձին մէջ, որպէսզի  
դուք արժանաւորապէս ծառայէք Աստուծոյ փառքին համար Հայաստանեայց Եկե-  
ղեցւոյ մէջ:

Սիրոյ ողջունելի

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Very Reverend  
Zaven Arzoumanian,  
Pastor

(Area Code 215)  
Church: ESsex 9-2515  
Residence: RAndolf 5-6999



**HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH**  
101 ASHMEAD ROAD, CHELTENHAM, PENNSYLVANIA 19012

ՅՈՒՆԻՍԵՐ 23, 1968

Գերաշնորհ

Տ. Թորգոմ Եպս. Մանուկեան, Առաջնորդ  
Հիւսիսային Ամերիկայի հայց. Եկեղեցւոյ

Կիւ Երբ

Գերաշնորհ և Սիրելի Սրբազան Հայր,

Այսու ուրախութիւնն ունիմ հաղորդելու Ձեր Սրբազանութեան  
թէ քաղաքիս Թեմբըլ Համալսարանէն շրջանաւարտ ըլլալով Փետրուարի  
Ցին կը ստանամ Մագիստրոս Արուեստից տիտղոսը: Երջանաւարտից հան-  
դիսաւոր արարողութիւնը տեղի պիտի ունենայ աւելի ուշ Յունիսին:

Ինչպէս յայտնած էի Ձեր Սրբազանութեան, երկու տարուան  
ընթացքին հետեւեր էի կրօնագիտական դասընթացքներու և այդ առիթով  
նախկին Առաջնորդ Գեր. Սիոն Սրբազանի կարգադրութեամբ Առաջնորդա-  
րանի կողմէ տրամադրուած էր համալսարանի ծախսը: Իսկ երբորդ տար-  
ւան ծախսերը ես իմ կողմէ հայթայթեցի ու այդ տարուան ընթացքին  
աշխատեցայ պատրաստել աւարտաճառս, որուն նիւթն է կիւրեղ Աղեքսանդ-  
րացի Հայրապետի ,,Պարսպուռնք,, գիրքը քրիստոսաբանութեան վերաբերեալ:

Վերջին նամակէ մը կը տեղեկանամ թէ նիշերս լաւ եղած են և  
աւարտաճառն ալ ընդունուած: Հաճեցէք ներփակ նօթը յանձնել առ որ  
անկ է: Մասնաւոր շնորհակալութիւն կ'ուզեմ յայտնել Առաջնորդարանէդ  
ընձեռուած նիւթական օգնութեան համար:

Ճիշդ այս պահուս լսեցի Բաբգէն Սրբազանէն որ կարգադրած էք  
վեհափառ Հայրապետի Ֆիլատելֆիա այցելութեան համար թուական մը, Մայիս  
8 ԴՇ. մասնաւոր շնորհակալութիւն ասոր համար եւս:

Ձեզ ի մօտոյ տեսնելու քաղցր յոյսով կը մատչիմ Ձեր Աջին

աղօթակցութեամբ,  
*Զաւէն Ե. Վրդ. Արզումանեան, Հովի*



**HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH**  
101 ASHMEAD ROAD, CHELTENHAM, PENNSYLVANIA 19012

Յուկունուար 22, 1968

Գերաշնորհ  
Տ. Թորգոմ Եպս. Մանուկեան, Առաջնորդ  
Հայր. Եկեղեցւոյ Հիւս. Ամբրիկայի

Նիւ Եորք

Գերաշնորհ և Սիրելի Սրբազան,

Յանուն մեր Եխական Խորհրդի կը խնդրեմ որ շնորհք ընէք  
պատասխանելու կարգ մը կարեւոր հարցերու մասին՝

1. Մայր Տաճարի օժման առիթով մեր ժողովուրդէն ոմանք  
Չերմօրէն կը փափաքին գալ Նիւ Եորք և մասնակցիլ այդ  
յիշատակելի հանդիսութեանց: Յարդ որեւէ տեղեկութիւն  
չենք ստացած պաշտօնապէս մասնակցութեան պայմաններուն  
վերաբերեալ -գին, ճաշագին, եկեղեցւոյ մէջ կանգնելու  
կարեւորութիւն, եւլն- Մինչդեռ դուրսէն կը լսենք ան-  
որոշ և զիրար հակասող լուրեր: Անձնապէս անհանգիստ կը  
զգամ երբ անոնց շիտակ պատասխան մը չկարենամ տալ:
2. Ամենայն Հայոց վեհափառ Հայրապետի այցելութեան մասին:  
Համայնքիս զոյգ եկեղեցիներու Չերմ փափաքն է որ Սրբազ-  
նագոյն Հայրապետը նաեւ իր շնորհաբեր այցելութիւնը տայ  
մեր համայնքին չաբթուան մէջ օր մը: Շատ անհաճոյ պիտի  
թուի մեր հաւատացեալներուն եթէ չկարենանք յաջողցնել:  
Կը հասկնամ կարգ մը դժուարութիւնները անմիջական որոշում  
տալուն մէջ, սակայն համայնքին մեծ ըլլալը, Ն.Ե.ին մերձ  
ըլլալն ու Ուաշինկթընի ճամբուն վրայ ըլլալը կարծեմ թէ  
կը դիւրացնէ: Հաճեցէք, եթէ կարելի է, թուական մը ճշդել  
որպէսզի մենք ալ կարենանք ժամանակ ունենալ արժանավայել  
ընդունելութիւն մը պատրաստել: Ժամակը կարճ է արդէն:
3. Նոր Տարուան պատի օրացոյցները չենք ստացած. ամէն կիրակի  
պահանջք կայ: Եթէ պիտի չունենանք իմ պատրաստածիս օրինակին  
վրայէն կողզեմ հոս տպել և ցրուել մեր ժողովուրդին:

Սիրով կը մատչեմ Ձեր աջին  
Առօթակից,  
*Zaven Arzoumanian*  
Զատեն Ծ. Վրդ. Արզումանեան, Հովիւ

Very Reverend  
Zaven Arzoumanian,  
Pastor

[Area Code 215]  
Church: ESsex 9-2515  
Residence: RAndolf 5-6999



**HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH**  
101 ASHMEAD ROAD, CHELTENHAM, PENNSYLVANIA 19012

ՅՈՒՆՈՒԱՐ 15, 1968

Գերաշնորհ  
Տ. Թորգոմ Ս. Եպս. Մանուկեան, Առաջնորդ  
Հիւսիսային Ամերիկայի Հայց. Եկեղեցւոյ

Կիւ Երբ

Գերաշնորհ և Սիրելի Սրբազան Հայր,

Եկեղեցւոյս հովիւին և հոգաբարձութեան փափաքն ու խնդրանքն է որ ներկայ տարուան մեր տարեդարձի հանդիսութիւնները կատարուին եկեղեցւոյս օծման թուականի մերձաւորագոյն կիրակիին: Խորհեցանք կանուխէն տեղեկացնել սոյն պարագան Ձեզի այն վստահութեամբ որ Ձեր կարելին պիտի ընէք ապահովելու բաղձացուած թուականը:

Սեպտեմբեր 22ը նախընտրելի թուականն է թէեւ կարելի է նաեւ նկատի ունենալ Սեպտեմբեր 29: Այս երկուքէն մին եթէ կը հաճիք ապահովեցէք մեզի համար որպէսզի ըլլաք մեր համայնքէն ներս: Թեւադրուեցաւ նաեւ որ եթէ երկրորդ թուականը ունենանք թերեւս աւելի կը յարմարի ամառուան արձակուրդէն ուշ մնացողներուն եւս:

Հաճեցէք ընդունիլ մեր բոլորին սերն ու բարի մաղթանքները,

սիրոյ ողջունիլ կը մատչիմ Ձեր Աջին,  
Աղօթակցութեամբ,

Զաւէն Ծ. Վրդ. Արզումանեան, Հովիւ

MASTER'S DEGREE CONFERRED

The Very Rev. Zaven Dz. V. Arzoumanian, Pastor of Holy Trinity Armenian Apostolic Church of No. Phila., was among the February 1968 graduates of Temple

University in Philadelphia. As a graduate student, Father Arzoumanian completed his two years post-graduate course and upon presentation of his thesis on St. Cyril of Alexandria's book "Scholia De Incarnatione Unigeniti", he was granted the degree of Master of Arts from the Department of Religion of Temple University.

Commencement ceremonies for the entire graduates will take place in June, 1968.

Մագիստրոս Արուեստից Տիտղոսի Ստացում

Կորթ Ֆիլատելֆիոյ Հայոց Ս. Երբորդութիւն Եկեղեցւոյ  
Հովիւը, Հոգւ. Տ. Զաւէն Ե. Վրդ. Արզումանեան, Փետրուար 1968ին  
Հրջանաւարտ ըլլալով Ֆիլատելֆիոյ Թեմբըլ Համալսարանէն, ստացաւ  
Մատիստրոս Արուեստից տիտղոսը, երկու տարուան դասընթացքը յաջողու-  
թեամբ աւարտելէ ետք, և ներկայացնելով իր ասարտաճառը Կիւրեղ Աղեք-  
սանդրացի Հայրապետի ,,Պարապո՛ւնք,, գրքի հայերէն թարգմանութեան մասին:  
Հրջանաւարտից հանդիսաւոր արարողութիւնը տեղի պիտի ունենայ յառաջիկայ  
Յունիսին:

*'Հայրապետաց Երեմի' Կաթողիկոս*  
*Հայրապետութեան Կաթողիկոս*

Very Reverend  
Zaven Arzoumanian,  
Pastor

(Area Code 215)  
Church: ESsex 9-2515  
Residence: RAndolf 5-6999



**HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH**  
101 ASHMEAD ROAD, CHELTENHAM, PENNSYLVANIA 19012

Մայիս 29, 1968

Մերեւելի  
Վազգէն Սրբազան,

Օրացոյցը պատրաստութեան մէջ է. մէկ երկու շաբաթէն  
ձեռքդ կը հասնի:

Մի քանի կէտերու մասին եթէ կը հաճիս ստուգումներ  
կատարէ և իմացուր յաջորդ շաբթուան ընթացքին:

1. Տաճարի օժման առթիւ մեզի ղրկուած 2 տոմսակներուն համար. Գիտես թէ ուշ ըլլալուն համար կարելի չեղաւ վիճակահանութեան բոլոր տոմսերը սպառել. գոյացաւ մօտ 600 տու որ պիտի ղրկենք անիշապէս: Մակայն հարկ է որ մեզի երկտողով մը իմացնես, քու ստորագրութեամբդ կամ յանձնախումբի որեւէ մէկուն, որ այս գումարը ղրկելով գոհացուցիչ նկատուած պիտի ըլլանք: Այս մասին արդէն խօսեր էի Տէր Լեւոնին հետ և ըսած էր թէ արդէն շատեր չէին ծախած եւ թէ մեր հաւաքածը Լաւ արդիւնք մըն էր:
2. Առաջնորդ Սրբազանը գրաւորապէս մեզի հաղորդած է որ Սեպտեմբերի 29ին պիտի ըլլայ մեզ հետ եկեղեցւոյն օժման բ. տարեդարձին առիթով: Մերըրին մէջ կարդացի թէ նոյն օր Պոսթոնի եկեղեցւոյն տարեդարձն է. խորհեցայ թէ թերեւս Սրբազանը հոն ալ երթայ: Շիփոթիլս մը ստեղծուած չըլլայ իր ժամանակացոյցին մէջ. հաճիս այս մէկն ալ ստուգէ:
3. Շրջանաւարտից հանդէսը թէմբըլ համալսարանի տեղի պիտի ունենայ Ուրբաթ Յունիսի 14ին, երբ ես ալ որպէս աւարտական պիտի մասնակցիմ հանդիսութեան: Առաջնորդը ատենին փակաբերուէր իմանալ այս մասին ներկայ ըլլալու ցանկութեամբ: Հաճիս իրեն իմացուր:

սիրով աղօթակից,



Քիւ 21016  
Յունիս 6, 1968

Հոգեշնորհ  
Տ. Զաւէն Ծ. Վրդ. Արզումանեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ  
Ֆիլասելֆիա.

Սիրելի Հայր Զաւէն,

Ի պատասխան Մայիս 29, 1968 թերակիր ձեր նամակին կուզամ հետեւեալ  
բացատրութիւնները տալու. -

1. - Տէր Լեւոնին հետ խօսեցայ մայր տաճարի օժման առթիւ ձեր համայն-  
քին ղրկուած երկու տոմսակներու համար ձեր հաւաքած 600 տոլարի  
մասին եւ յայտնեցի ձեր փափաքը ըստ որում այս գումարը ղրկելով  
Առաջնորդարանը մնացեալ 400 տոլարը պիտի չպահանջէր: Տէր Լեւոն  
համաձայն գտնուեցաւ որ այդ գումարը ղրկէք եւ իաշիւր թակուած  
նկատուի:
2. - Սեպտեմբեր 29ի ձեր տօնակատարութեան համար տակաւին Առաջնորդ  
սրբազան իօր հետ խօսելու առիթ չեմ ունեցած քանի որ ինք միշտ  
վեհափառ հայրապետին հետ է: Ձեր այս նամակը իր սեղանին վրայ  
պիտի դնեմ որ կարգայ եւ յամարը տնօրինէ:
3. - Առաջնորդ սրբազանը Մոնթրէալէն պիտի վերեդառնայ վաղը երեկոյ:  
Արդէն ձեր նամակէն կը տեղեկանայ ձեր շրջանաւարտ ըլլալուն  
մասին: Իմ կողմէ կրկին ընդունեցէք անկեղծ շնորհակտորութիւն-  
ներս: Կը հաւատամ որ ձեր զարգացումը Հայց. Եկեղեցւոյ համար  
շահ մըն է քանի որ այդ զարգացումը ի սպաս կը դնէք իայ ճողո-  
վուրդի օգտին համար:

Ենորհակալ եմ որ օրացոյցը պատրաստելու գործը աւարտելու վրայ էք  
Յաջողութիւն ձեզ եւ ի քաղցր տեսութիւն:

Սիրոյ Ողջունիւ

Վազգէն Ծպս. Գրաբըսլեան  
Առաջնորդի փոխանորդ

Թիւ 21726  
Ապրիլ 17, 1969

Հոգեշնորհ  
Տ. Զաւէն Ծ. Վրդ. Արզումանեան  
Հովիւ Ս. Սրբորդութիւն Հայց. Եկեղեցւոյ  
Նորթ ֆիլատելիա.

Սիրելի Հայր Զաւէն,

Ստացած ենք Ապրիլ 9, 1969 թուակիր Ձեր նամակը:

Վեհափառ Հայրապետին գրեցինք Հէրրի Գլժեանին շնորհուած շքանշանի  
կապակցութեամբ: Կ'ենթադրենք որ Վեհափառ Հայրապետը պէտք պիտի ունե-  
նայ Գլժեանի կենսագրութեան, կոնդակը գրելու ժամանակ:

Եթէ հաճիք Տիար Գլժեանի ամփոփ կենսագրականը մեզի դրկել, գայն  
կը յղենք Նորին Սրբութեան:

Սիրոյ ողջունել

ԹՈՐԳՈՍ ԱՐԶԵԳՈՍԿՈԳՈՍ  
Առաջնորդ

Քիւ 21928  
Յուլիս 22, 1969

Հոգեշնորհ  
Տ. Զաւէն Ծ. Վրդ. Արզումանեան  
Հովիւ Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ  
եւ Ստեփան Ծիական Խորհուրդի  
Նորթ ֆիլասելֆիա.

Սիրելի Հայր Զաւէն,

Ստացած ենք 7 Յուլիս 1969 թուակիր 2եր նամակը: Համաձայն ենք որ  
Տիար Հէրրի Գլժեանին շնորհուած շքանշանը Վեհափառ Հայրապետին կողմէ  
իրեն յանձնուի 2եր կարգադրութեան համաձայն, եկեղեցւոյդ երրորդ աւ-  
րեղարձի հանդիսութեանց օրը:

Ար ցաւինք որ մենք անձնապէս ներկայ պիտի չգտնուինք: Ար մաղթենք  
առողջ եւ երկար ապրիւնք Տիար Հէրրի Գլժեանին, գնահատելով իր ազգա-  
նրւէր եւ մարդասիրական բոլոր բարի գործերը:

Սիրոյ ողջունիւ

ՔՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԵՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ

Very Reverend  
Zaven Arzoumanian,  
Pastor

(Area Code 215)  
Church: ESsex 9-2515  
Residence: RAndolf 5-6999  
LI 8-0556



**HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH**  
101 ASHMEAD ROAD, CHELTENHAM, PENNSYLVANIA 19012

Թուրիս 7, 1969

Գերաշնորհ

Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան, Առաջնորդ  
Հիւսիսային Ամերիկայի Հայօ. Եկեղեցւոյ

Նիւ Եորք

Սերեւի Սրբազան,

Անցեալ շաբթուան ընթացքին շնորհակալութեամբ ստացայ  
Յովհաննէս Սրկ. Գասպարեանի ձեռամբ Տիար Հերրի Գլճեանի տրուած  
շքանշանը զոր Յակոբ Սրկ. Ներսոյեան իր հետ բերած էր Ս. Էջմիած-  
նէն: Նոյն օրերուն ստացայ նամակ մը Հայկազուն Արքեպիսկոպոսէն  
նոյն տեղեկութիւնը հաղորդող: Իսկ Զեզմէ արդէն առեր էի շքանշանը  
հաստատող կոնդակը:

Ս. Էջմիածնէն եկած նամակով վեհափառ Հայրապետը կը թելադրէ  
որ, Թորհրդակցելով Զեզ հետ պաշտօնական առիթով մը պարգեւատրութիւնը  
կատարուի Փիլատեֆիոյ մէջ: Անցեալ շաբթու գացի տեսնելու Պրն. Գլճեանը  
եւ հաղորդելու վեհափառին օրհնութիւնները եւ յայտնելու որ ամէն ինչ  
հասած է եւ յարմար տեսած ենք եկեղեցւոյս Գ. տարեդարձի հանդիսու-  
թեանց օր պաշտօնապէս յանձնելու շքանշանն ու կոնդակը: Թուակաւոր  
պիտի ըլլայ Կիրակի Սեպտեմբեր 21, 1969:

Վստահ եմ որ համաձայն պիտի ըլլաք սոյն կարգադրութեան: Եթէ  
Դուք անձամբ կարենայիք մեզ հետ ըլլալ անշուշտ շատ յարմար պիտի ըլլար:  
Սակայն արդէն ըսած էիք նախապէս թէ այդ օր պիտի չկարենաք հոս գալ:

Իսկ գալով Զեր վերջին նամակով ինծի յանձնած գործին պատրաս-  
տելու համար առաջին գլուխը միջ-եկեղեցական հարցին ներկայացնելու  
համար եպիսկոպոսական ժողովին, թերեւս կարենամ բան մը պատրաստել սա-  
կայն քիչ մը աւելի ժամանակ պիտի առնէ: Արդէն հինգ կարեւոր աղբիւրներ  
գտած եմ եւ ունիմ. սակայն պէտք է զանոնք կարդալ եւ ամփոփ դասաւոր-  
մամբ եւ հայերէնով պատրաստել:

Առողջութեան եւ յաջողութեան մաղթանքներով կը մնամ  
խոնարհ աղօթակից,

*Armen Sifianian*  
Զաւէն ծ վրդ. Արզումանեան  
հովիւ

Թիւ 22561  
Յունիս 10, 1970

Հոգեշնորհ  
Տ. Զաւէն Ծ. Վրդ. Արզումանեան  
Հովիւ Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ  
եւ Սախազահ Ժիական Խորհուրդի  
Նորթ Դիլաւել Դիա.

Սիրելի Հայր Զաւէն,

Ստացած ենք Ց Յուլիս 1970 թուակիր Ձեր նամակը, յետոյ Սարշ  
գերեզմանատան ինդրին կապակցութեամբ:

Համաձայն ենք որ Ժիական Խորհուրդը վերջնական կարգադրութիւն  
կատարէ եւ պաշտօնը տնօրինէ համայնքին սեփականութիւնը դարձնելու  
համար գերեզմանատան հայկական բաժինը:

Սիրոյ ողջունիւ

ԽՈՐԳՈՍ ԱՐԶԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Very Reverend  
Zaven Arzoumanian,  
Pastor

(Area Code 215)  
Church: ESsex 9-2515  
Residence: RAndolf 5-6999



**HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH**  
101 ASHMEAD ROAD, CHELTENHAM, PENNSYLVANIA 19012

ՅՈՒՆԻՍ 8, 1970

Գերաշնորհ  
Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, Առաջնորդ  
Հայց. Եկեղեցւոյ Հիւս. Միերիկայի

Կիւ ԵՊՔ

Գերաշնորհ եւ Սիրելի Սրբազան,

Ինչպէս բերանացի հաղորդեր էի այժմ Եխական Խորհուրդիս կողմէ գրաւորապէս կը փախաքինք վերջնական ձեւ մը տալ շրջանիս Ուայթմարշ գերեզմանատան մէջ Ձեր կողմէ գնուած եւ համայնքիս ի գործածութեան յանձնուած գերեզմաններու առկախ խնդրին:

Նկատելով որ երկար առեւն է որ չծախուած գերեզմաններու դրամները եւ հաշիւները չեն փակուած եւ արդար չէ որ Ձեր վճարած գումարը տակաւին չգանձէք, Խորհուրդս որոշեց մնացեալ գերեզմանները — թիւով կարծեմ տասը կամ պակաս — գնել Ձեզմէ իրենց սկզբնական գինով, այսինքն 85.00 տոլ հատը եւ զանոնք համայնքիս սեփականութիւնը դարձնել:

Եթէ Ձեր գրաւոր համաձայնութիւնը տաք այս մասին մենք պիտի հաստատենք ճշգրիտ թիւը մնացած հողերուն եւ փոխարժէքը հասցնել Ձեր Սրբազնութեան: Այս առթիւ կրնամ աւելցնել թէ հայկական հողամասին անմիջապէս կից 32 զոյգ գերեզմաններու տեղ մը եւս կայ որ կրնանք ծախու առնել պատկան իշխանութեանն եթէ համայնքիս անդամական ժողովը իր վերջնական հաւանութիւնը տայ: Թէեւ նիւթապէս առ այժմ պատրաստ չենք նման գումար մը վճարելու:

Սպասելով Ձեր պատասխանին կը մնամ յարգանք  
եւ եղբայրական սիրով

Զուէն Ծ Վրդ. Արզումանեան  
հովիւ

Նախագահ Եխական Խորհուրդի Ս. Երրորդ  
դուրիւն Եկեղեցւոյ

Քիւ 24678  
Նոյեմբեր 12, 1975

Հոգեշնորհ  
Տ. Արշէն Վրդ. Այվազեան  
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Նախագահ Ժիական Խորհուրդի  
Չելթընէմ.

Սիրելի Հայր Արշէն,

Սաացած ենք Նոյեմբեր 5, 1975 թուակիր ձեր նամակը, որով  
մեզ կը հրաւիրէք նախագահելու Եկեղեցւոյ՞ օծման 10-ամեակի  
հանդիսութեան, որ տեղի պիտի ունենայ Սեպտ. 19, 1976ին:

Սիրով կ'ընդունինք ձեր հրաւերը եւ Սեպտ. 19ի շաբաթավեր-  
ջը կը վերադասենք Չելթընէմի մեր համայնքի այցելութեան:

Համեցէք ժամանակին մեզի տեղեկացնել 10-ամեակի հանդիսու-  
թեան կապակցութեամբ ծրագրուած յայտագիրներու մանրամասնու-  
թեանց մասին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԷՆԳԻՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ

Very Rev. Arshen Aivazian  
Pastor

(Area Code 215)  
Church: ESsex 9-2515  
Residence: PI 5-1946



**HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH**  
101 ASHMEAD ROAD, CHELTENHAM, PENNSYLVANIA 19012

Նոյեմբեր 5, 1975

Գերշ. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան  
Առաջնորդ Հիւս. Ամերիկայի Արեւելեան Թեմին  
Նիւ Եօրք, Ն.Ե.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

1976-ի Սեպտեմբերին կը Լրանայ Եկեղեցւոյս օծման տասնամեակը: Կարեւոր հանգրուան մըն է ասիկա մեր ծուխի տարեգրութեանց մէջ, եւ կը ծրագրենք պատշաճ հանդիսութիւններով նշել այս տարեդարձը:

Այսու կը խնդրենք Ձերը Սրբազանութենէն հովուական այցի գալ ծուխիս եւ այս առիթով նախագահել տասնամեակի հանդիսութեանց: Մի քանի շաբաթ առաջ քաղաքս ձեր այցելութեան առիթով յանձնարարած էիք Սեպտեմբեր 19, 1976 որպէս յարմար թուական ձեր այցելութեան: Յանուն ճխական Խորհուրդի կը վախաքիմ հաստատել այս թուականը:

*Handwritten notes:*  
հետագայի -  
վրայադրուած է  
18

Ձերը ի սիրոյն Գրեհատոսի,

Արշէն Վրդ. Այվազեան  
Հովեւոր Հովիւ եւ  
Նախագահ Ճխական Խորհուրդի



Քիւ 24945  
Յուլիս 28, 1976

Հոգեշնորհ  
Տ. Արշէն Վրդ. Այվազեան  
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Նախագահ Թիական Խորհուրդի  
Չէլթընհամ.

Սիրելի Հայր Արշէն,

Սաացած ենք Յուլիս 16, 1976 թուակիր ձեր նամակը՝  
Չէլթընհամի համայնքին մեր տալիք այցելութեան կապակցու-  
թեամբ:

Ընդառաջելով ձեր խնդրանքին, Վիրակի Աեպտ. 19ին՝  
Ս. Պատարագի ընթացքին Եկեղեցւոյդ երկարամեայ դպրապետ  
Պերոն Երէցեանը կիսասարկաւագ կը ձեռնադրենք:

Ժամանակին ձեզի կը աեղեկացնենք ֆիլատելիա մեր  
հասնելու Օշգրիտ օրն ու ժամը:

Սիրոյ ողջունիւ

ՔՈՐԳՈՄ ԱՐԷՇՊԻՍՎՈՊՈՍ  
Առաջնորդ



**HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH**  
101 ASHMEAD ROAD, CHELTENHAM, PENNSYLVANIA 19012

**Յուլիս 16, 1976**

**Գերաշնորհ**

**Տ. Թերզում Արքեպիսկոպոս**

**Առաջնորդ Հայոց Ամերիկայի Արեւելեան Թեմին**

**Ս. Վարդան Մայր Տաճար Կ. Ե.**

**Գերաշնորհ Սրբազան Հայր,**

Մեր եկեղեցւոյ օժման տասնամեակին առիթով, Սեպտեմբեր 19, 1976-ին ձեր մեզի շնորհած հովուական այցելութեան ծրագիրը պատրաստուեցաւ Նիսիանի խորհուրդին կողմէ: Ուրբաթ, Սեպտեմբեր 17-ի երեկոյեան Նիսիանի խորհուրդը կը փափաքի ձեզ հիւրընկալել ընթացքով մը, որմէ ետք հանդիպում մը պիտի ունենաք եկեղեցւոյս բոլոր կազմակերպութեանց վարչական մարմիններուն հետ: Ձեր փափաքին համաձայն Շաբաթ օր ոչինչ կը ծրագրենք: Իսկ Կիրակի, հանդիսաւոր Ս. Պատարագ եւ ապա ճաշկերոյթ Ձեր նախագահութեամբ:

Այս առիթը կը փափաքիմ մասնաւոր խնդրանք ներկայացնել որ Կիրակի, ի ժամ Ս. Պատարագի, ըստ Ձեր Տնօրինութեան, շնորհ ընել մեզի եւ եկեղեցւոյս երկարամեայ ղարապետ եւ ժրաջան անդամ Պերճ Երեցեանին շնորհէք Կիսասարկաւագութեան Ս. Աստիճանը:

Ընծայեալը ծանօթ է իր նուիրումով եւ գիտութեամբ, եւ վստահ եմ որ դուք եւս արժանի պիտի դատէք զինք այս շնորհին:

Ձերդ խոնարհաբար  
*Arshen Aivazian*  
Արշէն Վրէ Արքեպիսկոպոս  
Հոգեւոր Հովիւ

Քիւ 24998  
Նոյեմբեր 28, 1976

Հոգեշնորհ  
Տ. Արշէն Վրդ. Այվազեան  
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Զելթընհամ.

Սիրելի Հայր Արշէն,

Առաջած ենք Հոկտեմբեր 27, 1976 թուակիր ձեր նամակը եւ ներփակեալ նուէրը, որուն համար կը յայտնենք մեր շնորհակալութիւնը:

Այս առթիւ կը փափարինք մեր գնահատանքը յայտնել Ձեզի թընհամի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ օժման 10րդ տարեդարձին առթիւ ձեր եւ ծիական Խորհուրդիդ տարած արդիւնաւոր աշխատանքին համար:

Բարի եղէք մեր շնորհակալութիւնը փոխանցել Տէր եւ Տիկին Գերժ Երէցեանին եւ Տէր եւ Տիկին Ճան Միրաքեանին, որոնք նոյն օրը ճիշդ ժամանակին ինքնաշարժով մեզ հասցուցին Քենեաի օդակայանը Նիւ Եորքի մէջ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԷՇՅԻՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ

# HOLY TRINITY ARMENIAN CHURCH

101 ASHMEAD ROAD, CHELTENHAM, PENNSYLVANIA 19012 • (215) 379-2515

THE VERY REVEREND ARSHEN AIVAZIAN, PASTOR

Հոկտեմբեր 27, 1976

Գերշ. Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս  
Առաջնորդ Հայոց Հիւս. Ամերիկայի  
Արեւելեան Թեմին, Նիւ Եօք


Գերշ. Սրբազան Հայր,

Եկեղեցւոյս Օծման Տասնամեակին առիթով մեր ծու-  
խին շնորհած Ձեր հովուական այցելութիւնը եւ այդ  
առիթով տեղի ունեցած հանդիսութիւնները իրապէս յիշա-  
տակելի անցան:

Կը ցաւինք որ հարկադրուած էիք կանուխ ձգել մեզ,  
որուն պատճառաւ չկարողացանք պատշաճ կերպով մեր շնոր-  
հակալութիւնը յայտնել Ձեզ: Այսու, հաճեցէք ընդունիլ  
իմ եւ Նխական Խորհուրդի, ինչպէս նաեւ համայն ծուխիս  
շնորհակալութիւնը:

Ներքակ հաճեցէք գտնել մեր գնահատանքի արտայայ-  
տութեան երախտիքը: Ներողամիտ եղէք ակամայ յապաղու-  
մին համար:

Ձերդ և Բրիստոս

  
Արշէն Վրդ. Այվազեան  
Հոգեւոր Հովիւ

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

Մայիս 31, 1977

**Հոգեշնորհ**  
**Տ. Արշեն Վոզ. Այվազեան**  
**Հովիւ Ս. Սրբորդութիւն Եկեղեցւոյ**  
**Ստեփան Ժրական Խորհուրդի**  
**Ձեռքնեամբ.**

**Սիրելի Հայր Արշեն,**

Նորոգ հանգուցեալ Հայկ Գավուրճեան 102 տարեկան պիտի ըլլար այս տարեկան Օգոստոսին: Ետըջ քառասունըհինգ տարիներ յօգուտ իր ազգին եւ եկեղեցիին կատարած իր դրական ծրագրումներուն, սրտեանդն ջանքերուն եւ իրագործումներուն ամենէն գեղեցիկ կոթողը պիտի մնայ Մայր Տաճարի, Մշակութային Կեդրոնի եւ Առաջնորդարանի համալիրի կառուցումը նիւ Եորթ քաղաքի սրտին վրայ:

Հուսահոգի Հայկ Գավուրճեան իր կեանքի մինչեւ վերջին պահը մտածեց եւ աշխատեցաւ կերպն ու միջոցը գտնել Մայր Տաճարի պարտուց բարձման: Այս մեծ բարերարին շունչը դժբախտաբար յանկարծ սպառեցաւ, առանց լրացնել կարենալու իր այդ առաջադրութիւնը:

Իր մեկնումով ձգուած այս խոշոր բացը կամրջելու համար Առաջնորդարանէն ներս նոր ծրագրումներով զբաղեցան Հայկ Գավուրճեանի անձն ու ոգին յարատեւ վառ պահելու նախանձախնդիր բարեկամներ: Անոնք, յետ լուրջ խորհրդածութեան, յառաջացուցին Կեդրոնական Գործադիր Մարմին մը, որուն կազմի անդամներն են.

- |                           |                     |
|---------------------------|---------------------|
| Տիար Տատուր Տատուրեան     | Ատենապետ            |
| Տիար Սուրէն ֆէսմեան       | Գանձապահ            |
| Տիար Եղուարդ Պաշեան       | Բ. Գանձապահ         |
| Տ. Գառնիկ Բհնյ. Հալլամեան | Քարտուղար           |
| Տ. Աննակ Բհնյ. Գասպարեան  | Բ. Քարտուղար        |
| Տիար Իիչըրտ Գ. Կրէկըրի    | Օրինական Խորհրդատու |

Կեդրոնական Գործադիր Մարմինը կազմեց Հայկ Գավուրճեանի ոգեկոչման կարգացոյց մը, որուն գործադրութեան ընթացք պիտի տրուի սոյն թուականէն մինչեւ Օգոստոս 20, որ ծննդեան թուականն է ողբացեալ Հայկ Գավուրճեանի:

Յանձնախումբի նպատակն է ապահովել 102 անձեր որոնք տրամադիր ըլլան իւրաքանչիւրը 1000 --մէկ հազար-- տուար նուիրել, եւ գտնել 1000 անձեր որոնցմէ իւրաքանչիւրը 102 --հարիւր երկու-- տուար յանձն առնէ նուիրել Հայկ Գավուրճեանի յիշատակին:

Մնացեալ պարտքի գումարն է 750,000 --եօթը հարիւր յիսուն-- հազար տուար, որուն ղիմաց դրամատան մէջ ունինք միայն 150,000 --հարիւր յիսուն հազար-- տուար՝ որ մէկ տարուան վճարումն է:

Սոյն նպատակին կարեւորութիւնը նկատի ունենալով կը յանձնարարենք.


1. Հոգեհանգստեան Պաշտօն կատարել մեր թեմի եկեղեցիներուն մէջ Հայկ Գավուրճեանի հոգևոյն համար, անոր մահուան քառասունքին առթիւ, Յունիս 5էն մինչեւ Յունիս 26, ըստ յարմարութեան:

2. Կազմել տեղական յանձնախումբ մը հետապնդելու համար առաջադրուած նպատակը: Յանձնախումբի անդամներուն անունները համեցէք մեզի դրկել մինչեւ Յունիս 16: Եթէ փափաքին, համայնքներ կրնան քառասունքի Հոգեհանգիստէն յետոյ մատաղի ծաշ հրամցնել ներկաներուն, եւ այդ առիթով բացատրել նպատակը եւ ծրագիրը կազմուած յանձնախումբին: Նուէրները պէտք է Առաջնորդարան դրկուին նուիրատուներու հասցէներով:

3. Ձեր համայնքին մէջ համեցէք գտնել 70 անձեր, որոնցմէ իւրաքանչիւրը փափաքի 102-ական տուար նուիրել Հայկ Գավուրճեանի յիշատակին, Ս. Վարդան Մայր Տաճարի պարտուց բարձման համար:

Լիայոյս ենք որ Կեդրոնական Գործադիր Մարմնի այս սկզբնական աշխատանքներուն սատար հանդիսանալու համար, մեր հոգեւոր հովիւներն ու ծխական խորհուրդները բարենախանձութեամբ պիտի կատարեն յիշեալ ոգեկոչումները եւ պիտի անպայման արդիւնաւորեն նուիրահաւաքման գործը: Այսպէսով լաւագոյնս արտայայտած պիտի ըլլանք մեր սէրը ``Համայնքի նահապետ`` պատուանունով ծանչցուած Հայկ Գավուրճեանին, որուն հոգին երկնային լոյսերու մէջէն կը հետեւի մեր համադրեալ ջանքերուն:

Սիրոյ ողջունիւ



ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ